

## ՅԱՐԳԱՆՔԻ ԽՕՍՔԵՐ

## Տ. ԹՈՐԳՈՍ ՊԱՏՐԻԱՐԻՄԱՆ ՄԱՀՈՒԱՆ ԱՌԹԻՒ(\*)

Թորգոմ Պատրիարքին մահը կարելի է ասել ցնցեց արտասահմանի Հայութիւնը, ոչ միայն այն դիրքի համար, որ զբաւած էր, այլ մանաւանդ այն գէժքին համար, որ զնալով դառնում է մեծազգեցիկ. Պատրիարքական գահին վրայ նա ներկայացնում էր ոչ այնքան Երուսաղէմի վանքը, որքան հայոց ազգային եկեղեցին և հայ եկեղեցականը: Հաւատարիմ իր համոզումին թէ հայն ու իր հիկեղեցին մի են և անբաժան՝ նա պաշտպանում էր հայոց պատմական եկեղեցին. հայոց ազգը պաշտպանելու գիտակցութեամբ եւ ծառայում էր հայութեան՝ եկեղեցուն ծառայելու ներքին համոզումով: Տիպար հայ-քրիստոնեան էր իր սքեմին տակ և գնում էր իր առունը խառնելու այն երախտաւոր եկեղեցականների շարքին, որ անցեալ դարերի մէջ պաշտպանեցին հայոց եկեղեցին ու ժողովուրդը անձնուիրաբար և անդուռ: Նրանք, որ մտերմ ու մերձ էին իր անձին ու գործին, անշուշտ չեն գանգաւոր վեր հանել նրա դերը Երուսաղէմի բարեկարգութեան գործի մէջ ինչպէս և բնութագրել մարդն ու քրիստոնեան նրա անձի մէջ: Յուսով եմ նաև, որ Դուրեան մատենադարանի շարքի մէջ Երուսաղէմը լոյս կ'ընծայէ հանգուցեալ Պատրիարքի գրութիւնները, որ լոյս տեսած են Սիոնի մէջ: Ինձ համար իր գործի մէջ ամենից զնահատելի կողմն եղած է իր հոգածութիւնը հայոց լեզուի մասին և հայ բանասիրութեան: Ինչն ունէր խնամում և հայերէն և նոյն խնամքով կը խմբագրէր Սիոնի յօդուածները. իր օրով Սիոնը դարձաւ շատ արժէքաւոր պարբերական: Վանքին ձեռագիրների ցուցակագրութեան աշխատանքը, որ իր օրով սկսաւ և Դուրեան մրցանակի արգիւնքները, որ իր ժամանակ երևան եկան, Դուրեան մատենադարանը, որ մեծ ապագայ ունի եթէ նոյն խնամքին արժանանայ, որ կը վայելէր իր կողմէն —

անվիճելի ապացոյց են իր բանասիրական հոգածութեան:

Յաւալի էր Թորգոմ Պատրիարքի մահը և ապաժաման. բայց ամէնքս մահկանացու ենք: Կրկնակի ցաւալի կը լինի մեր կորուստը, եթէ այն ոգին, որով աշխատեցին ու զործեցին վարպետն ու աշակերտը — Դուրեան և Դուչակեան՝ իր շարունակողը չունենայ նրանց մահից յետոյ: Երուսաղէմը միակ ազգային կեդրոնն է, որ իր նիւթական միջոցներով կարող է բարոյական մեծ զբաւազուիչ ամբարել և դառնալ մեծ զօրավիճ հայ ազգայնութեան՝ արտասահմանի մէջ: Դուրեան սկսեց, Դուչակեան շարունակեց պատուով և անցեց, պէտք է, որ յաջորդը աւելի մեծ արգիւնքի հասնել կարենայ:

Նախորդների աշխատանքը նախորդած է ուղին, պէտք է աւելի հեռուն զնալ միշտ նոյն ուղղութեամբ, որ ազգին հաւանութեան արժանացած է, ինչպէս ցոյց տուաւ Դուրեանի յորելեանը և Դուչակեանի մահը: Հասցնել նոր, անձնուէր, գիտապէս պատրաստուած ուժեր. հասնել սփիւռքի հոգեոր կարիքներին. ամուր կիմքերի վրայ գնել հայոց բանասիրութեան մշակուած ու զարգացումը — հաւ երից մեծ զործեր, որ սպասում են Նոր Պատրիարքից իրենց շարունակութիւնը: Յայտնի է թէ ինչ առնու ունեցած է Երուսաղէմն ու իր պարտքը վերջին դարի ընթացքին. այդ ցաւալի համար մոռցնել տուին Դուրեան և Դուչակեան. անշուշտ նպաստեցին և պարագանքը, թուրքական իշխանութեան վերացումը: Պարագանքներ նոյն են, պէտք է այնպէս աշխել, որ Երուսաղէմի բարի համբաւը գնալով աւելի տարածուի և Ս. Յակոբեանց վանքը դառնայ պահպան հայոց ազգայնութեան և մշակութի:

Ն. ԱՂԲԱԼԵԱՆ

(\*) Սոյն գրութիւնը բաղաւած է հեղինակի ցաւակցական նամակէն: